ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 4442-Ա « 15 » նոյեմբերի 2024թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի Հ.9615-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 01.11.2024թ. եզրակացությունը, քաղաքացու դիմումը.

1.Երևանի քաղաքապետի 2009 թվականի դեկտեմբերի 7-ի «Երևանի Այգեստանի 11-րդ փողոցի 1-ին նրբանցքի հ.3/20 բնակելի տան նկատմամբ Ռիտա Լևոնի Գևորգյանի գույքային իրավունքները վերականգնելու, 256.38քմ մակերսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» հ.9615-Ա որոշման /այսուհետ՝ Որոշում/ մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

1) Որոշումը լրացնել նոր՝ 1.1 կետով հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը, Երևան քաղաքի Այգեստանի 11-րդ փողոցի 1-ին նրբանցքի հ.3/20 հասցեի հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման».

2) Որոշման վերնագրում, նախաբանում, 2-րդ կետում՝ «256.38» թիվը փոխարինել «255.87» թվով.

3) Որոշման նախաբանում և 1-ին կետում՝ «556.38» թիվը փոխարինել «555.87» թվով.

4) Որոշման 3-րդ կետում՝ «քաղաքապետի օգնականին» բառերը փոխարինել «քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետին» բառերով:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ